

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 34/1

4 սեպտեմբերի 2012թ.

Քննարկվեց «Էներգաչափ» ՓԲԸ 18.08.2012թ. թիվ 01-ԱԱ 06-31 գրությամբ բերված գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ կողմից շահութահարկի կանխավճարների գծով լրացուցիչ պարտավորություններ առաջադրվելու դեմ:

«Էներգաչափ» ՓԲԸ գանգատում մասնավորապես նշված է.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ 11.07.2012թ. թիվ 6564/6 գրության պատասխանը չի բավարարել ընկերությանը, քանի որ «Էներգաչափ» ՓԲԸ-ն 2011թ. ապրիլի 13-ին խոշոր հարկ վճարողների ՀՏ է ներկայացրել հայտարարություն 2011թ. շահութահարկի կանխավճարների եռամսյակային մեծությունների ինքնուրույն որոշելու վերաբերյալ, համաձայն որի Ընկերության քարտը Խոշոր ՀՏ-ում հաշվառվել է համաձայն ներկայացված հայտարարության: Նշված հանգամանքը հաստատվում է ընկերության և հարկային տեսչության կողմից կազմված փոխադարձ հաշվարկների ստուգման տեղեկանքներով:

Քանի որ կանխավճարների հաշվարկման և ներկայացման վերաբերյալ փոփոխություններ իրականացվել է համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ 08.04.2011թ. թիվ 720-Ն հրամանի, որը ուժի մեջ է մտել 02.06.2011թ. (հաստատվել է վավերացնող մարմնի կողմից), ուստի 2011թ. 2-րդ եռամսյակի շահութահարկի կանխավճարների ինքնուրույն որոշման և հարկային տեսչություն ներկայացման գործընթացն ընկերության կողմից կատարվել է համաձայն այդ պահին գործող օրենսդրության, որում շահութահարկի կանխավճարների եռամսյակային մեծության ինքնուրույն որոշելու մասին հայտարարությունը շահութահարկի հաշվետվության հետ կամ հաշվետվությունից հետո ներկայացվելու պահանջ նախատեսված չի եղել:

Ընկերության համար անհասկանալի է հրահանգի հետադարձ գործողության կիրառման պատճառը, քանի որ այն հետադարձ ուժ չի կարող ունենալ:

Եթե ՀՀ ԿԱ ՊԵԿ թիվ 720-Ն հրամանով «Ռեզիդենտի կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 9.7 կետը փոխվել է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթի ընթացակարգը հստակեցնելու նպատակով, ուրեմն դրույթը պարունակել է անպարզություններ, երկիմաստություններ, տարբերություններ, հետևապես կիրառելի է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալն ընկերությունն գտնում է, որ կատարված շահութահարկի կանխավճարների վերահաշվարկը, ինչպես նաև հաշվարկված տույժը կատարվել է անհիմն, ուստի պահանջում ենք վերականգնել շահութահարկի կանխավճարների մեծությունը, համաձայն ընկերության կողմից ներկայացված հայտարարության և հանել հաշվարկված տույժը:

Գանգատի քննարկման ընթացքում նշվեց, որ 2012թ. հունվարին ընկերությունը Խոշոր հարկ վճարողների ՀՏ-ից տեղափոխվել է Կենտրոնի ՀՏ:

14.04.2011թ-ին ընկերությունը ԽՀՎ ՀՏ ներկայացրել է 2010թ-ի տարեկան շահութահարկի հաշվարկը, որի համաձայն վճարման ենթակա շահութահարկի գումարը կազմել է 41.575.2 հազ. դրամ, իսկ շահութահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը՝ 6929.2 հազ. դրամ (41.575.2x1/6):

Ռեզիդենտի կողմից շահութահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունը ինքնուրույն որոշելու մասին հայտարարությունը (այսուհետ նաև հայտարարություն) ընկերությունը ներկայացրել է 13.04.2011թ-ին, իսկ շահութահարկի հաշվարկը, ինչպես որ վերը նշվել է՝ 14.04.2011թ-ին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռեզիդենտի կողմից շահութահարկի կանխավճարի եռամսյակային մեծությունն ինքնուրույն որոշելու մասին հայտարարություն

ընկերությունը ներկայացրել է շահութահարկի հաշվարկը ներկայացնելուց մեկ օր շուտ, ուստի հայտարարությունը հիմք չի ընդունվել: Արդյունքում շահութահարկի կանխավճարները հաշվարկվել են Կենտրոնի ՀՏ կողմից հիմք ընդունելով ընկերության ներկայացված տարեկան շահութահարկի հաշվարկում արտացոլված տվյալները:

Կերոգրյալի հետևանքով Կենտրոնի ՀՏ կողմից կանխավճարների գծով սուաջին, երկրորդ և երրորդ եռամսյակների համար ընկերությանն առաջադրվել են լրացուցիչ պարտավորություններ:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության և « ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ ներկայացուցիչների բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը հիմնավոր է հետևյալ պատճառաբանությամբ:

« Ըստ համաձայնագրի 22-րդ հոդվածի համաձայն, «Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խտացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

Իր հերթին, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3 մասի համաձայն, «Իրավական ակտում կատարված փոփոխությունների կամ լրացումների, բացառությամբ նրա առանձին մասերը վերացված կամ անվավեր կամ չեղյալ ճանաչելու դեպքերի, գործողությունը տարածվում է դրա ուժի մեջ մտնելուց հետո ծագած հարաբերությունների վրա, եթե սույն օրենքով, այլ օրենքներով, ինչպես նաև փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող իրավական ակտով այլ բան նախատեսված չէ»:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի 08.04.2011թ-ի թիվ 720-Ն որոշման համաձայն, ՀՀ ԿԱ Հարկային պետական ծառայության 02.04.2004թ. թիվ 1-05/7-Ն հրամանում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, որի հետևանքով «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 9.8 կետի «է» ենթակետը լրացվել է հետևյալ բովանդակությամբ. նոր պարբերությամբ. «Ընդ որում՝ այդ հայտարարության ներկայացումը դեռևս հիմք չէ նախորդ տարվա նկատմամբ ընթացիկ տարվա հարկվող շահույթը պակաս նախատեսելու և ռեզիդենտի կողմից շահութահարկի եռամսյակային կանխավճարների գումարներն ինքնուրույն դրոշելու (հաշվարկելու) համար, եթե ռեզիդենտի կողմից նշյալ հայտարարությունը ներկայացնելուց առաջ կամ նույն օրը չի ներկայացվել նախորդ տարվա շահութահարկի հաշվարկը»:

Նշվեց նաև, որ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի 08.04.2011թ-ի թիվ 720-Ն որոշումը ուժի մեջ է մտել 02.06.2011թ-ին:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում 02.06.2011թ-ին ուժի մեջ մտած ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեի 08.04.2011թ-ի թիվ 720-Ն որոշմամբ «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի 9.8 կետի «է» ենթակետում կատարված լրացումը (փոփոխությունը) չի կարող տարածվել մինչև դրա ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա, հիմք՝ ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածի 3 մասի դրույթները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

«Էներգալատի» ՓԲԸ գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կենտրոնի ՀՏ կողմից շահութահարկի կանխավճարների գծով լրացուցիչ պարտավորություններ առաջադրվելու դեմ, բավարարել:



Հանձնաժողովի նախագահ՝

S.ԱՂԱԲԵԿՅԱՆ